ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2026 թվականի N 732 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 1158-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի «Դատախազների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը, դատախազության խորհրդանիշի նկարագիրը և համազգեստի տրամադրման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 441-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1158-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 3-րդ կետի 3.2-րդ ենթակետում «Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար» բառերից հետո հանել «2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից» բառերը.

2) 3-րդ կետի 14-րդ ենթակետում «50 մմ» բառերը փոխարինել «35 մմ» բառերով.

3) 3-րդ կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերությունում հանել «ասեղնագործ» և «, 4.5 սմ շառավղով» բառերը.

4) 3-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերությունում «Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար» բառերից հետո հանել «2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից» բառերը.

5) 3-րդ կետի 18-րդ ենթակետի «ա» պարբերությունում հանել «ասեղնագործ» և «, 4.5 սմ շառավղով» բառերը.

6) 3-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերությունում «Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար» բառերից հետո հանել «2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից» բառերը.

7) 4-րդ կետի 3.3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.3) **տաբատ՝** մուգ կապույտ գույնի կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրակարով, գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են (կողային) (ձև N 7, նկար 6), բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է երկու մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով (ձև N 7, նկար 5).».

8) 4-րդ կետի 13-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**գոտի՝** կաշվե, սև, 25 մմ լայնությամբ, միաանցք.».

9) 4-րդ կետի 16-րդ ենթակետի «ա» պարբերությունում հանել «ասեղնագործ» և «, 4.5 սմ շառավղով» բառերը.

10) 4-րդ կետի 16-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. **տաբատ՝** մուգ կապույտ գույնի կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրակարով, գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են (կողային), բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է երկու մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով,».

11) 4-րդ կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. **բաճկոն՝** մուգ կանաչ գույնի 44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2-տոկոսանոց լայկրա կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Բաճկոնի կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Օձիքը՝ ծալովի: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ թևքանշան՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերով: Կրծքամասի ձախ գրպանի կափույրի վերևից՝ գրպանի լայնությանը համաչափ մշակվում է 2.5*12.5 սմ չափերի կպչուն ժապավեն «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» մակագրության ամրացման համար: Թելի գույնը՝ արծաթագույն,».

12) 4-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. **տաբատ՝** մուգ կանաչ գույնի կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրակարով, գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են (կողային), բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է երկու մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով,».

13) 6-րդ կետում «կապույտի ֆոնի վրա (N 4 ձև, նկար 1)» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և զինվորական դատախազության դատախազների մուգ կանաչ բաճկոնի դեպքում՝ կանաչ ֆոնի վրա (N 4 ձև, նկար 2)» բառերը.

14) N 4 ձևը լրացնել նկար 2-ով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

27.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ